ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 17 մայիսի 2021թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Է. Շաթիրյանի

Անդամակցությամբ՝ Վ. Գրիգորյանի

Ե. Խունդկարյանի

Քննության առնելով Էդվարդ Ներսիսյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Էդվարդ Ներսիսյանի դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2021 թվականի ապրիլի 27-ին: Դիմողը խնդրում է.

«ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ և 108-րդ հոդվածի 2-րդ կետերը, այն մասով որ նախատեսում են փոխհատուցում վճարման ենթակա դատական ծախսերի և վճարման ենթակա գումարների մասով Սահմանադրության 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:

2. Դիմողն առաջ է քաշում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 107-րդ հոդվածի 2-րդ մասի և 108-րդ հոդվածի 2-րդ մասի՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնա-

բանությամբ, Սահմանադրության մի շարք հոդվածներին հակասելու վարկած: Մասնավորապես, հղում կատարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ)՝ «Մելտեքս» ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի» գործով 2008 թվականի հունիսի 17-ի վճռի 10-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշմանը՝ դիմողն արձանագրում է, որ ՄԻԵԴ-ը փոխհատուցելի է համարել միայն կատարված ծախսերը, և ՄԻԵԴ-ի վճիռը չի պարունակում նշում վճարման ենթակա ծախսերի մասին: Մինչդեռ ըստ դիմողի՝ Օրենսգրքի վիճարկվող նորմերը սահմանում են, որ փոխհատուցման ենթակա են նաև վճարման ենթակա դատական ծախսերը:

Վերոգրյալի հիման վրա դիմողը գտնում է, որ «….դատարանները իմ նկատմամբ կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107-րդ և 108-րդ հոդվածների 2-րդ կետերը, թույլ են տվել նյութական և դատավարական խախտում, հակասել են ՀՀ Սահմանադրության 80-րդ և 81-րդ հոդվածներին, որն էլ խախտել է Էդվարդ Ներսիսյանի սահմանադրության 63-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը և կայացված դատական ակտը այդ մասով օրինական համարվել չի կարող»:

Դիմողը նշում է, որ թիվ ԵԴ/29103/02/19 քաղաքացիական գործով Դ. Նազարյանի և Ռ. Բաբակեխյանի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց առ այն, որ իրենց կողմից կատարվել են փաստաբանական ծառայության վճարումներ: Այդ առնչությամբ դիմողն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքում, մասնավորապես, նշել է. «(…) միայն սույն հանգամանքը, որ փաստաբանական ծախսերը Դոնարա Նազարյանի և Ռուբեն Բաբակեխյանի կողմից իրականում կատարված չեն, առավել քան բավարար է եղել դատարանին, որ հիմք ընդունելով «Մելտեքս» ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գանգատ թիվ 32283/04) 2008 թվականի հունիսի 17-ի վճռի 10-րդ կետով արտահայտած իրավական դիրքորոշումը և մերժեր դրա բավարարումը»:

3. Ուսումնասիրելով սույն անհատական դիմումը և վերջինիս կից ներկայացված դատական ակտերը, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատա-

ռանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ ներքոնշյալ պատճառաբանությամբ.

դիմողը որպես Օրենսգրքի վիճարկվող նորմերի հակասահմանադրականության հիմնավորում նշում է, որ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը հակասել է ՄԻԵԴ-ի՝ «Մելտեքս» ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի» գործով վճռի 10-րդ կետով արտահայտված իրավական դիրքորոշմանը: Դիմողն իր դիրքորոշումը հիմնավորել է այն հանգամանքով, որ դատարանը, փաստաբանական ծառայություններ մատուցելու դիմաց վճարման ենթակա գումարները բռնագանձելու վերաբերյալ որոշում կայացնելով հօգուտ Դ. Նազարյանի և Ռ. Բաբակեխյանի, թույլ է տվել դատական սխալ, քանի որ վերջիններիս կողմից չի ներկայացվել որևէ ապացույց առ այն, որ իրենց կողմից կատարվել են փաստաբանական ծառայության վճարումներ «Լեքս ֆակտոր» ՍՊԸ-ին: Մինչդեռ ՄԻԵԴ-ի վերոնշյալ ակտի համաձայն՝ դիմումատուին տրվում է իր ծախսերի փոխհատուցում միայն այն դեպքում, երբ ցույց է տրվում, որ դրանք իրականում կատարվել են, եղել են անհրաժեշտ և իրենց ծավալով ողջամիտ են:

Վերոգրյալից հետևում է, որ դիմողը Օրենսգրքի համապատասխան նորմերի սահմանադրականությունը վիճարկում է ոչ թե դրանց և Սահմանադրության միջև ենթադրյալ հակասության համատեքստում, ինչը Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումների համար պարտադիր պայման է, այլ դրանց և ՄԻԵԴ-ի ակտով արտահայտված իրավական դիրքորոշումների միջև ենթադրյալ հակասության համատեքստում: Դիմողը նշում է, որ վիճարկվող նորմերը, իր կարծիքով, հակասում են Սահմանադրության 79, 80 և 81-րդ հոդվածներին, սակայն դիմողի կողմից ներկայացված պնդումներն իրականում ուղղված են վիճարկվող նորմին դատարանի կողմից տրված մեկնաբանության և ՄԻԵԴ-ի դիրքորոշման միջև ենթադրյալ հակասությունը հիմնավորելուն:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ ձևականորեն բարձրացնելով իրավական նորմի սահմանա-

դրականության հարց՝ դիմողն իրականում առաջ է քաշում նորմի կիրառման իրավաչափության հարց, որի քննությունը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասությունից:

Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ որպես Սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ: Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ Սահմանադրական դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումը կիրառելի է նաև սույն գործով՝ Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով, որին համապատասխան՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին որոշում է ընդունում, եթե դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Էդվարդ Ներսիսյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝ Է. Շաթիրյան

Անդամներ՝ Վ. Գրիգորյան

Ե. Խունդկարյան

17 մայիսի 2021 թվականի
ՍԴԴԿՈ-31